ՍՄԲԱՏ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԵՎ «ՀԱՅՔ» ՀԱՆԴԵՍԸ

ՍՏԵՓԱՆՅԱՆ Է. Տ.

XIX դ. վերջի – XX դ. սկզբի ամերիկահայ իրականության մեջ ամենանշանավոր դեմքերից էր Մկրտիչ Սմբատ Գաբրիելյանը՝ բազմակողմանի կրթություն ստացած մտավորական, լայնախոհ ու ազգասեր հասարակական-քաղաքական գործիչ, որի գաղափարները և տեսակետներն արևմտահայության ազատագրության ուղիների մասին թեև լայն ընդունելություն չգտան ազգային-ազատագրական շարժման վերելքի այդ տարիներին, բայց և երբեք չանտեսվեցին թե՛ հակառակորդների և թե՛ համախոհների կողմից՝ մեզ թողնելով հակասական ու կանխակալ, նաև ճշմարտացի գնահատականներ նրա մասին: Ամերիկահայ գաղթօջախում նա ունեցավ իր գաղափարական հետևորդները, իսկ ազգային, պատմական, բանասիրական, բժշկական-առողջապահական հարցերին նվիրված նրա՝ ժամանակին հայտնի աշխատությունները չվրիպեցին նաև հետագա ուսումնասիրողների ուշադրությունից:

Ս. Գաբրիելյանը ծնվել է 1856 թ. դեկտեմբերի 15-ին Ակնում[1]: Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա՝ Խարբերդում, որից հետո երկու տարի հայերեն է դասավանդել Այնթապի Կ. Թ. քոլեջում, որտեղ և 1878-1881 թթ. ուսանել է բժշկություն: Մի քանի տարի հայրենի Ակնում որպես բժիշկ աշխատելուց հետո Ս. Գաբրիելյանը մեկնում է Փարիզ ուսումը շարունակելու: 1884-1885 թթ. ուսանելով Փարիզի համալսարանում և բժշկի վկայական ստանալով՝ նա կրկին վերադառնում է Այնթապ՝ այս անգամ արդեն բժշկություն դասավանդելու[2]: Ս. Գաբրիելյանը Այնթապի Կ. Թ. քոլեջում դասախոսությունները 1885-1886 թթ. համատեղում է Ազարիա-Սմիթ հիվանդանոցում բժշկի աշխատանքի հետ, ապա որոշում է հաստատվել Կ. Պոլսում: Սակայն հանգամանքներն այլ կերպ են դասավորում նրա կյանքը: Թուրքական իշխանությունների կողմից արգելվում է Ս. Գաբրիելյանի՝ դեռևս 1879 թ. լույս տեսած «Վերականգնումն հայոց» աշխատությունը, և հեղինակը, հետապնդումներից խույս տալու նպատակով, Կ. Պոլսից անցնում է Վառնա[3] և այնտեղից էլ 1886 թ. աշնանը՝ ԱՄՆ: 1894-1897 թթ. նա սովորում է Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանում, ուսումնասիրում պատ-

---

[1] *Տե՛ս* **Մուշեղ եպիսկոպոս,** *Ամերիկահայ տարեցույցը, Ա տարի, Պոստոն, 1912, էջ 262: Ս. Գաբրիելյանի կենսագրության հիմնական տվյալները վերցված են այստեղից:*

[2] *Տե՛ս* **Փափազեան Ս. Կ.,** *Մ. Սմբատ Գաբրիէլեան, Լոս Անջելէս, 1939, էջ 38-39:*

[3] *Նույն տեղում, էջ 10:*

մություն, ընկերաբանություն, քաղաքատնտեսություն[4]: Սմբատ Գաբրիելյանը մահացել է 1919 թ.[5]:

Ս. Գաբրիելյանը կարևոր դեր է կատարել ամերիկահայ գաղթօջախի ազգային-հասարակական կյանքում: Տարբեր ժամանակներում նա եղել է Նյու Յորքի Հայ հայրենասիրաց միության, Հայ հառաջադիմական ընդհանուր ընկերակցության, Ամերիկահայ գաղթային խորհրդի նախագահը: Ազգային, պատմական, քաղաքական, մշակութային և այլ թեմաներով գրված, նյութի լավատեղյակությամբ և կենսականությամբ հագեցած նրա դասախոսությունները և բանախոսությունները գրավում էին մեծ թվով ունկնդիրների:

Գաղթօջախի մտավորական կարող ուժերից էր Ս. Գաբրիելյանը՝ բազմակողմանի հետաքրքրությունների և գիտելիքների տեր մարդ: Նա հավասարապես տիրապետում էր անգլերենին և ֆրանսերենին, գերազանց գիտեր ժամանակակից հայերենը, գրաբարը և թուրքերենը: Նրա գրական առաջին ստեղծագործությունները հրատարակվել են Ակնում լույս տեսնող խմորատիպ «Ծաղիկ» պարբերականում[6]: Աշխատակցել է նաև բազմաթիվ հայ (Կ. Պոլսի «Արևելք», Վիեննայի «Հանդես ամսօրյա», ԱՄՆ-ի «Կոչնակ» և այլն) և ամերիկյան («Նյու Յորք թայմս» և այլն) պարբերականների: Տասնյակից ավելի հայերեն և անգլերեն աշխատությունները[7], որտեղ հեղինակը ցուցահանել է բանասիրական, հետազոտական տաղանդ և վերլուծական մեծ կարողություն, նվիրված են ազգային, հասարակական-քաղաքական, պատմական, բանասիրական հարցերի, որոնք ժամանակին ճանաչում են բերել հեղինակին: Սակայն նրա թերևս ամենամեծ ձեռնարկը և երախտիքը ստվարածավալ «Հայք» հանդեսն է (1891-1898 թթ.), որը, խմբագրի հասարակական-քաղաքական հայացքների արգասիքը լինելուց բացի, ակնառու դիրք է գրավում հայ պարբերականների շարքում:

«Հայք» կիսամսյա հանդեսը՝ XIX դ. ամերիկահայ ամենանշանավոր պարբերականը, լույս տեսավ Նյու Յորքում, 1891 թ. հունվարից: Ձեռնարկելով այս գործը, որի մտահղացումը երկու տարվա վաղեմություն ուներ, Ս. Գաբրիելյանը նշում է հրատարակության դրդող երկու գլխավոր շարժառիթներ. «...նախ՝ մեր ազգային գոյութեան տագնապալից վիճակն, որ ազգի բոլոր ոյժերն կը հրաւիրէ ի գործակցութիւն և երկրորդ՝ զի Հայ գաղթականութիւնք արագապէս ստուարանալով ի Միացեալ Նահանգս՝ պէտք ունին ազգային հաղորդակցութեան կանոնաւոր գործիքի մի»[8]: Այս դրդապատճառներն էլ հենց իրենց գործուն դերն են ունենում

---

[4] Տե՛ս **Մուշեղ եպիսկոպոս,** *նշվ. աշխ., էջ 262,* **Փափազեան Մ. Կ.,** *նշվ. աշխ., էջ 15:*

[5] Տե՛ս Կոչնակ, 1919, N 23, էջ 743, N 24, էջ 765 և այլն, **Փափազեան Մ. Կ.,** *նշվ. աշխ., էջ 25 և այլն:*

[6] Տե՛ս Ակն և ակնցիք, նախ. և հավաքեց **Քէչեան Ա.,** *խմբ. Պաթումեան Մ., Փարիզ, 1952, էջ 678:*

[7] **Գաբրիէլեան Ս.,** *Վերականգնումն Հայոց, Կ. Պոլիս, 1879,* **նույնի՝** *Հայ բողոքականութեան անցեալն ու ապագան, Կ. Պոլիս, 1888,* **նույնի՝** *Հայկական ճգնաժամ և վերածնութիւն, Բոստոն, 1905,* **նույնի՝** *Ազգային քաղաքականութիւն Հայոց, Նիւ Եորք, 1893 և այլն:*

[8] Հայք, 1891, N 1, էջ 1:

«Հայքի» նպատակադրումների և ծրագրի կազմավորման մեջ: Պարբերականը նպատակ ուներ սատարել ազգային փրկությանը, օժանդակել գաղթականության նյութական և բարոյական առաջադիմությանը և նպաստել ազգի ֆիզիկական զարգացմանը, ուստի և՝ «իւր էջեր պիտի նուիրուին Հայկական խնդրոյ, Հայոց պատմութեան և լեզուին քննութեան և առողջաբանական յօդուածոց»[9]:

«Հայքը» զուտ անհատական ձեռնարկ էր և կրում էր իր խմբագիր-հրատարակչի քաղաքական հայացքների խոր կնիքը, և, բնականաբար, բնութագրել և արժեքավորել «Հայքը», նույնն է, թե գնահատել և արժեքավորել խմբագրի հասարակական-քաղաքական հայացքները, որոնց ձևավորման և զարգացման ողջ ընթացքն իր ելևէջներով արտացոլված է հանդեսի ստվար հատորներում: Լինելով անկուսակցական պարբերական՝ «Հայքն» իր որոշակի դիմագիծը, ծրագիրը և ուղղությունն ունի, որոնք նրան տարբերում են ժամանակի շատ պարբերականներից, և, շնորհիվ խմբագրի հասարակական-քաղաքական հայացքների, ձեռք է բերել որոշակիորեն ընդգծված գաղափարական ուղղվածություն:

Ելնելով միայն «Հայք» հանդեսի ընձեռած (այն էլ՝ ոչ լրիվ) հնարավորություններից՝ ուրվագծենք Ս. Գաբրիելյանի՝ ազգային, հասարակական, քաղաքական գործչի, հայագետի, մեծ հայրենասերի, ինչպես նաև խմբագրի դավանած ազգային գաղափարախոսության հիմնական միտվածությունը:

Հայ ազգային-ազատագրական պայքարի մասին Ս. Գաբրիելյանի դիրքորոշումը երևան է գալիս «Հայքի» հենց առաջին համարներից: Հանդեսի առաջին էջերը զբաղեցնող հոդվածում («Հայկական իրաց վիճակն և կեդրոնական յանձնախմբի մը պէտքը») խմբագիրն առաջ է քաշում միության, կենտրոնական հանձնախումբ ստեղծելու և ազատագրական պայքարը մի միասնական կենտրոնից ղեկավարելու պահանջը: Քննության առնելով Արևմտյան Հայաստանի և հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական կացությունը Թուրքիայում, սուլթանի վարած քաղաքականությունը մասնավորապես հայերի նկատմամբ՝ հեղինակը եզրակացնում է, որ հայերի ապստամբական շարժումները, ցույցերը այդ քաղաքականության բնական և օրինաչափ հե- տևանքն են: Հայ ժողովրդի ազգային ու քաղաքական կազմա-կերպ-վածությանն անդրադառնալով՝ նա իրավացիորեն նկատում է. «Տաճկաստանի հայ ժողովուրդն այսօր մարմին մի չկրնար համարուիլ և իբր մարմին գործելու անզօր է»[10]: Նա բանական ելք էր տեսնում արտասահմանի մեծ ու փոքր հայրենասիրական միությունների միավորման և համատեղ գործակցության մեջ: Նրանք, իրենց հերթին, պետք է կազմակերպեին «ազգային տիեզերական կեդրոն» Թուրքիայից և Ռուսաստանից դուրս, «եւրոպեան ազատ հողին վերայ»: Այս կենտրոնական ազգային մարմինը կամ հանձնախումբը և կամ ազգային ժողովը պետք է հայ

[9] Նույն տեղում:
[10] Նույն տեղում, էջ 2:

գաղթաշխարհի ներկայացուցիչը և գլուխը լիներ, միավորեր և կազմակերպեր ազգի ուժերը, հայրենասիրական ջանքերը և օտար տերությունների առջև հանդես գար որպես ազգի պաշտոնական ներկայացուցիչ: «Հայքը» քննարկման է ներկայացնում ստեղծվելիք կենտրոնական հանձնախմբի ծրագրի գույգ տարբերակները, հրապարակում ընթերցողնե- րի նկատառումները: Ս. Գաբրիելյանը նույնիսկ իր նպատակի իրագործման նախաքայլերն է անում. Նյու Յորքում 1891 թ. ապրիլի 4-ին նրա նախաձեռնությամբ ստեղծվում է Հայ հայրենասիրաց հանձնախումբը, որը նպատակ ուներ աշխատել Եվրոպայում՝ Կենտրոնական հանձնախմբի կազմակերպման ուղղությամբ:

1893 թ. «Հայքն» արդեն առաջարկում է Փարիզում կամ Լոնդոնում համահայկական ժողով հրավիրել «ազգային քաղաքականութիւն որոշելու համար»: Հանդեսի էջերը տրամադրվում էին բանախոսելու, վիճաբանելու, կարծիքներ փոխանակելու, տեսակետներ հայտնելու և ուղեգիծ մշակելու համար: Բանավեճը բացվում էր, «որպէս զի յստակ ըմբռնում, ընդհանուր համոզում և խորին հաւատք ստեղծուի, թէ ինչ է իսկապէս մեր դատն և ինչ ընթացիք և ինչ միջոցներով կարելի է զայն վաստկիլ»[11]: «Հայքն» այն սկսում է Ներսես պատրիարքի՝ Հայկական հարցի մասին տեսակետները տպագրելով: Սակայն այս առաջարկն էլ ցանկալի արդյունք չի տալիս, և Կենտրոնական հանձնախմբի ստեղծման գաղափարը հետզհետե մարում է հանդեսի էջերում:

Պարբերականը, որի ստեղծման նպատակներից մեկն էլ Հայկական հարցի լուծման ուղիների մշակումն էր և Հայաստանի անկախության հիմնահարցի պարզաբանումը, հենց առաջին համարներից է ցուցահանում իր քաղաքական դիմագիծը: Հայ ազգային-ազատագրական մտքի ձևավորման և պայքարի զարթոնքի այդ շրջադարձային տարիների պատմական պահի լրջությունը ըմբռնելով էր, որ «Հայքը» գրում էր. «Հայը գոյութեան վճռական մրցանքի բռնուած է, որոյ ելքն պիտի լինի կեանք կամ մահ»[12]: Որպես «ազատա- կան» պարբերական (սա խմբագրի բնորոշումն է)՝ այս պատմական, բախտորոշ պահին «Հայքն» առաջ չէր քաշում Հայաստանի ազատագրության և անկախության հարցը, այլ պահանջում էր միայն ինքնօրինություն օսմանյան տիրապետության տակ, Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի գործադրությունը և բարեկարգությունների իրագործում՝ եվրոպացի կառավարչի հսկողությամբ: Եվ քանի որ հայոց պահանջն այս ձևով իսկ անընդունելի էր Բ. դռան համար, Ս. Գաբրիելյանն առաջարկում էր հող նախապատրաստել՝ ֆրանսալեզու «Լ'Արմենի» և «Հայաստան» թերթերի միջոցով «յեղյեղել զայն Եւրոպայի ականջին», իսկ «Հայքի», «Հնչակի» և «Արմենիայի» «պաշտօնն է լուրջ սկզբանց քարոզութեամբ կրթել Հայ գաղթականութիւններն, ներշնչել ի նոսա ինքնապաշտպանութեան և անձնուիրութեան զգացումներ, յորդորել զնոսա ի

[11] *Նույն տեղում, 1893, N 11, էջ 165:*

[12] *Նույն տեղում, 1891, N 1, էջ 1:*

միաբանութիւն և ի միութիւն, որք են ներքին ուժոյ անհրաժեշտ և հիմնական պայմանք»[13]: Այսպիսով, խմբագիրն առաջ է քաշում հայ մամուլի դերի և գործունեության մարտավարական իր ծրագիրը: Այս նույն հոդվածում («Սուր երկսայրի»), Ս. Գաբրիելյանը բացահայտում է իր ծրագրի դիվանագիտական կողմը՝ գրելով. «Պարտիմք այնպէս խօսել մեր ֆրանսախօս բերաններով, որպէս թէ դիւանագիտութեամբ պիտի յաջողիմք, որպէս թէ Եւրոպա պիտի գործադրէ 61-րդ յօդուածն ի հեաձուկս Բ. Դրան դժկամակութեան. միւս կողմանէ մեր հայախօս մամուլ այնպէս խօսելու է և այնպիսի փութով կազմակերպելու է մեր գաղթային ոյժերն, որպէս թէ բնաւ յոյս չլինէր դիւանագիտական միջոցներէ օգտուելու – որպէս թէ մեք մեր զօրութեամբ միայն պիտի ստանամք մեր արդար պահանջ:

Ահա այս է մեր ՍՈՒՐ ԵՐԿՍԱՅՐԻ»[14]:

Այսպիսով, «Հայքը» պայքարի խաղաղ ձևերով չէր սահմանափակվում: Խմբագիրը հստակ գիտակցում էր, որ միայն դիվանագիտությամբ ազատագրության հասնել հնարավոր չէ: «Քանի որ քաղաքակիրթ աշխարհ զօրութեան միջոցաւ իր իրաւունքներն պաշտպանելու հարկին ներքև կը գտնուի, մեզ՝ Հայոցս, ներելի՞ է յուսալ, թէ լոկ թերթերով և փաստաբանութեամբ կրնամք ստանալ մեր պահանջներ»[15],- գրում էր հանդեսը: Բացասաբար պատասխանելով այս հարցին՝ Ս. Գաբրիելյանը շարունակում է. «Ուրեմն հայերս ալ քաղաքակիրթ աշխարհի ընթացքին և բնութեան օրինաց հետևելով՝ պարտիմք պատրաստուիլ մեր զինու զօրութիւն միացունել բանին զօրութեան»[16]: Պայքարի այս երկու ձևի միակցումն է, որ հաղթանակի հնարավորություն է ընձեռում: Եվ այստեղից էլ բանաձևվում է Ս. Գաբրիելյանի հավատամքը. «Հայքի» քաղաքականությունն է «երկսայրի սրոյ» քաղաքականությունը: «Հայքի» հաւատքն է, թէ Հայեր անմիջական մեծ կարօտութիւն ունին զինուորական կրթութեան»[17]:

Ներկայացնելով հայ ժողովրդի իմացական, նյութական և ֆիզիկական չօգտագործվող հնարավորությունները՝ Ս. Գաբրիելյանը նշում է ազգի տկարության երկու գլխավոր պատճառներ՝ ժողովրդի իմացական ու նյութական ուժերի անկազմակերպ, ցրված լինելը և ֆիզիկական ուժի անմշակ ու վայրենի վիճակի մեջ գտնվելը: Զինվորական ուժի և կազմակերպվածության անհրաժեշտությունը շեշտելով՝ հեղինակը հիշատակում է շատ կարևոր և մեզ պակասող մի գործոն ևս. դա ազգի՝ հոգեբանորեն վերափոխման անհրաժեշտությունն է: «Ազգն,- գրում է նա,- նոր խմոր մը պիտի ընդունի զինուորական ոգւոյ և պիտի փոխակերպի: Ոչ միայն ցաւ զգալ և բարկանալ, այլ և զարնել պիտի գիտնայ, զինուորի նման զարնել»[18]: «Հայքը»

[13] Նույն տեղում, N 6, էջ 42:
[14] Նույն տեղում:
[15] Նույն տեղում, N 12, էջ 90:
[16] Նույն տեղում:
[17] Նույն տեղում:
[18] Նույն տեղում:

մեկ անգամ ևս մանրամասնում է իր քաղաքականությունը, ավելի ճիշտ՝ իր գործունեության նպատակն ու կոչումը. «Ս. Կազմակերպեալ ձևի բերել, համախմբել ազգին նիւթական և իմացական ոյժերն:

Բ. Տկարացած ոյժերն, մասնաւորապէս զինուորական ոգին և կրթութիւնը զարթուցանել և մշակել յԱզգին»[19]:

Մեկ այլ առիթով ևս Ս. Գաբրիելյանը պատկերավոր կերպով գրում է. «Ուրեմն պէտք է, որ մէկ ձեռքով բարձր բռնեմք մեր բողոքն ի տես համօրէն քաղաքակիրթ աշխարհի, մանաւանդ Պեռլինեան դաշնագիրն ստորագրողաց …

Իսկ միւս ձեռքով պարտիմք բռնել ՍՈՒՐՆ»[20]:

Պայքարի այս երկու ձևի համակցումը, ըստ Ս. Գաբրիելյանի, հնարավոր կդարձներ հայ ազատագրական պայքարի հաղթանակը:

Հանդեսի էջերում մշակվում է նաև ազգային քաղաքականու- թյան մի որոշակի ուղղություն, որն ամբողջանում է «Հայքի» 1893 թ. մի քանի համարներում՝ «Ազգային քաղաքականութիւն» վերնագրով: Ս. Գաբրիելյանի այս աշխատությունը նույն թվին լույս է տեսնում նաև առանձին գրքույկով: Հեղինակն ազգային քաղաքականության ուրվագիծը մշակելիս ելնում է ազգի լինել-չլինելու, որպես ազգ և ժողովուրդ գոյատևելու և վերածնվելու այն հիմնախնդիրներից, որ դրել էր ժողովուրդների առջև պատմական ժամանակաշրջանը: Եվ այդ ժամանակաշրջանի բարդությունն ու հարցի կենսականությունը ըմբռնելով՝ նա բարձր պատասխա- նատվությամբ էր մոտենում բուն խնդրին: Հարկ է նշել, որ «Ազգային քաղաքականութիւնը» շարադրվել էր մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ դեռ չէին սկսվել հայերի զանգվածային կոտորածները, և թեև այն չի կրել այդ արհավիրքների սթափեցնող ազդեցությունը, սակայն հեղինակը միանգամայն իրատեսորեն էր գնահատում վտանգի մեծությունը:

Հատկանշական է, որ Ս. Գաբրիելյանն այժմ արդեն ազգի փրկության գործում հույս չի դնում դաշնագրերի վրա: 61-րդ հոդվածի կիրառումը, որի մասին ոգևորությամբ գրում էր նա երկու տարի առաջ, համիդյան վարչակարգի պայմաններում անիրականալի էր, իսկ հայկական գավառների բարեկարգումը՝ անհնարին: Այս եզրակացությանը հանդեսը հանգել էր նաև իր նախորդ հոդվածնե- րում: «Հայկական խնդիրն» ուրեմն,- գրում էր նա,- լոկ հացի, հանգստութեան, կենաց և ընչից և պատուոյ ապահովութեան խնդիր չէ, որպէս յաճախ կ'ըսուի: Այդ ամենն է և ավելին ալ: Հայկական խնդիրն հայ ազգի գոյութեան և չգոյութեան, Հայաստանի վերածնման կամ վերջնական կորստեան խնդիրն է»[21]: Հայկական հարցի այսպիսի լայն ըմբռնումից ելնելով՝ հեղինակն արտահայտում էր իր տեսակետը հայ ազգային քաղաքականության մասին և խորհրդակցության հրավիրում:

---

[19] Նույն տեղում:

[20] Նույն տեղում, N 14, էջ 106:

[21] Նույն տեղում, 1893, N 8, էջ 119:

Բարձր գնահատելով Ներսես Վարժապետյանին որպես ազգային, քաղաքական գործչի՝ Ս. Գաբրիելյանը բացահայտում էր նրա քաղաքականության թերի կողմերը, ավելի ճիշտ՝ այդ քաղաքականության և հայ ժողովրդի վիճակի, քաղաքական հասունության մակարդակի միջև եղած հակասականությունը: Անլուր նեղություններ, տառապանքներ կրած, արյուն թափած հայ ժողովուրդն ինքը ոչ մեկի արյունը չէր թափել, չէր պայքարել ազատության համար, որը և Եվրոպայի աչքում նրան դարձնում էր խեղճ, ողորմելի, արգահատելի: Սակայն սա ազատություն ստանալու պայման չէր: Այսպիսի ժողովրդի համար միայն գթություն կարելի էր հայցել, իսկ «Ազատութիւնն չպահանջուիր բանիւ, այլ կառնուի բռնութեամբ, կը ստացուի կռուով և կը պահպանուի զօրութեամբ»[22]: Ս. Գաբրիելյանը չէր մեղադրում պատրիարքին իր դիվանագիտական, թեկուզև ապարդյուն, ճիգերի համար՝ գտնելով, որ դա էր լավագույնը տվյալ պարագայում, սակայն նշում էր անցյալի քաղաքականության երկու կարևորագույն սխալները՝ եվրոպական դիվանագիտության մասին թյուր պատկերացումը և հայերին ոչ ճիշտ ձևով Եվրոպային ներկայացնելը (սոսկ որպես քրիստոնյա, կրոնական ազգ և ոչ որպես «ազգային զգացմամբ տոգորուած ցեղ՝ պատրաստ ազգային քաղաքական կեանքի»[23]): «Լինիմք ազգային ինքնաճանաչութեամբ հասուն ժողովուրդ,- գրում էր հանդեսը,- ոչ տիրացու ազգ և ներկայանամք աշխարհի իբրև այնպիսի,- ահա այդ է մեր ազգային քաղաքականութեան կարևորագոյն կէտերէն մին»[24]: Հեղինակն անհրաժեշտ էր համարում ազգային բնավորության վերափոխում՝ խընդրարկու, պաշտպանվող տեսակից խրոխտ, ուժեղ, ազատության համար մարտնչող տիպի: «Ազգային փրկութեան պայմանն լոկ խելք չէ, այլ և բնաւորութիւն և աւելի բնաւորութիւն, քան թէ խելք»[25]: Մյուս կողմից՝ Ս. Գաբրիելյանն իրավացիորեն կարծում էր, որ ոչ մի տերություն չի պատերազմի հանուն հայերի, և ոչ մի տերություն ի վիճակի չէ տալու ճշմարիտ ազատություն, «քանզի ազատութիւն ըսուածն լոկ արտաքին և ձևական բան մի չէ, զոր ոմն շնորհէ ումեք, ազատութիւնն վիճակ մէ, որում ժողովուրդն ինքն պարտի կրթութեամբ, մրցմամբ, ճգամբ հասնիլ»[26]:

Առավել իրատեսական են նրա մոտեցումները դիվանագիտական գործունեության և օտար պետությունների օգնության վերաբերյալ իր դիրքորոշումը պարզաբանելիս: Հայկական դիվանագիտություն, որպես այդպիսին, չկա և չի կարող լինել, քանի որ գոյություն չունի և հայ կառավարություն: Դիվանագիտական բոլոր դիմումները խնդրագրի բնույթ ունեն և օրինականությունից ու ազդեցությունից զուրկ են: Հայերի «ոչ-օրինական դիւանագիտութիւնն» այն ժամանակ միայն ազդեցիկ կդառնա, մանրամասնում է հեղինակը, երբ մեծ տերությունները համոզվեն, որ

[22] Նույն տեղում, էջ 121:
[23] Նույն տեղում, N 9, էջ 136:
[24] Նույն տեղում, էջ 137:
[25] Նույն տեղում, էջ 139:
[26] Նույն տեղում, N 10, էջ 151:

հայերը ուժ ունեն և այդ ուժը գործածելու պատրաստ են՝ դրանով իսկ գոնե վրդովելով միջազգային խաղաղությունը և օտարի միջամտության տեղիք տալով: Ըստ նրա, հայ արտաքին դիվանագիտական գործունեությունը պետք է սահմանափակվի զանազան հրատարակություններով Եվրոպայի «հանրային կարծիքն ի նպաստ մեզ շինելու մէջ»[27]: Եզրակացությունը, որ հայ ժողովուրդն իրոք պետք ունի ուրիշ տերության իրական աջակցության, սակայն այն ապահովելու առաջնագույն պայմանն է հայ զինված ուժի առկայությունը, «Հայքի» քաղաքական հավատամքն է: Ազգային քաղաքականության ուղղվածության մասին իր եզրահանգումները բխեցնելով Հայկական հարցի՝ հայ ազգի գոյության և չգոյության անողոք երկընտրանքի դաժան իրողությունից՝ հայրենասեր գործիչն ամփոփում է. «Որպէսզի Հայ ազգն ու հայրենիքն փրկուին, վերածնին, պէտք է, որ Հայք ոչ տիրացու, այլ աշխարհական, ոչ լոկ խօսող, այլ մարտնչող և բուռն ժողովուրդ մի լինին»[28]:

Հայոց արտաքին քաղաքականությունը ուղենշելիս Ս. Գաբրիելյանը ելնում էր ժամանակի միջազգային քաղաքական իրադրությունից և, իրատեսորեն գնահատելով այն, համոզված էր, որ Հայաստանի բախտն ու ապագան կախված են եվրոպական մեծ տերությունների՝ Թուրքիայում ունեցած քաղաքական և տնտեսական հակամարտ շահերից ու ձգտումներից: Դրանց մեջ նա առանձնացնում էր երկու գերիզոր տերություններին՝ Անգլիային և Ռուսաստանին, որոնց ներքին ու արտաքին քաղաքականությունը հարկ էր համարում ուսումնասիրել հայ ժողովրդի շահերի տեսանկյունից: Միջազգային բարդ իրադրության պայմաններում Ս. Գաբրիելյանը կարծում էր, որ հայերի համար առաջնային էր թե՛ Անգլիայի և թե՛ Ռուսաստանի համակրանքը շահելը: Մանավանդ վերջինիս դերը Արևելյան խնդրի լուծման գործում կասկածի տեղիք չի տալիս: Հայկական հարցի լուծման տեսակետից հայերի համար վտանգավոր և կործանիչ էր նկատում ինչպես ռուսահպատակ հայ, այնպես էլ ռուս սոցիալիստների գործունեությունը:

«Հայքի» ռուսական կողմնորոշումը դրսևորվում է նրա հրատարակության առաջին տարվանից: Դեռևս 1891 թ. հանդեսը գրում էր. «... Ռուսիա է այն պետութիւն, որ կրնայ առաւել քան զայլ ամենայն օգնել կամ վնասել մեզ: Նա ճիշդ մեզ կից է. կրնայ մեզ քարին զարնել, կրնայ մեզ վեր բռնել իւր հզօր բազկաւ և ի հեռուկս ամենուն...»[29]:

Հայ դատի լուծման հարցում եվրոպական պետությունների, մասնավորապես Ռուսաստանի գործուն մասնակցությանը «Հայքն» առավել շատ է անդրադառնում 1894-1896 թթ. հայկական կոտորածներից հետո: Թեև այս իրադարձությունները որոշակի ազդեցություն գործեցին Ս. Գաբրիելյանի քաղաքական հայացքների ողջ

[27] Նույն տեղում, էջ 152:
[28] Նույն տեղում, էջ 153:
[29] Նույն տեղում, 1891, N 18, էջ 138:

համակարգի վրա՝ նրան ստիպելով վերագնահատել երևույթները, սակայն ամենևին էլ բեկումնային չդարձան: Խոր հիասթափություն և հուսախաբություն են արտահայտում արևմտյան տերությունների, մասնավորապես Անգլիայի՝ արևելյան քաղաքականության վերաբերյալ հոդվածները («Անգլիա՞ է մեր բարեկամ, թէ՞ Ռուսիա», «Քրիստոնեայ Հայաստան և քրիստոնեայ տէրութիւնք» և այլն): Հայերի նկատմամբ նրանց վարած քաղաքականությանը Ս. Գաբրիելյանի տված գնահատականը ճշգրիտ բնորոշումն էր Հայաստանում ստեղծված իրադրության. «…աւելի ճշմարիտ կը լինէր ասել. շնորհիւ եւրոպական պաշտպանութեան և համակրանաց կը կործանի Հայաստան»[30]: Չարդարացնելով նաև Ռուսաստանի բռնած դիրքը հայկական զանգվածային ջարդերի նկատմամբ՝ նա, այնուամենայնիվ, ռուսական քաղաքականությունն ավելի նպաստավոր էր համարում: Եվ թեև փորձ էր արվում հայերի և Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների դիրքորոշումը մեկնաբանել նրանց տնտեսական ու քաղաքական հակամարտ շահերի բախման տեսանկյունից, սակայն մեղադրվում էին նաև հայերը իրենց դիվանագիտական սխալ գործունեության, քաղաքական իրադրությունը ճիշտ գնահատելու անկարողության, անհեռատեսության և անխելամտության համար:

Հայ ազգային-ազատագրական պայքարի վերջնական նպատակը հայկական վարչական ինքնօրինության ձեռքբերումն էր օսմանյան գերիշխանության տակ, ընդ որում, Ս. Գաբրիելյանը կարծում էր, որ ճիշտ է ոչ թրքահպատակ, այլ օտարազգի և օտարահպատակ քրիստոնյա կառավարիչ ունենալը: Սա այն առավելագույնը և, թերևս, լավագույնն էր, որն իրականալի էր թվում քաղաքական տվյալ իրավիճակում: 1894-1896 թթ. հայկական կոտորածները որոշ սրբագրումներ մտցրեցին Ս. Գաբրիելյանի այս տեսակետների մեջ ևս: Դրանք առնչվում են հենց Հայ դատի գործում Ռուսաստանի դերի բարձրացման մասին նրա արտահայտած համոզմունքներին և բխում դրանցից: Արդեն 1896 թ. և ավելի որոշակի 1897-1898-ին երևվում են հոդվածներ, որտեղ ընդգծվում են ռուսական տիրապետության ցանկալիությունը և ինչ որ իմաստով՝ նաև անխուսափելիությունը: Ասենք, որ կոտորածներից հետո հայերի անպաշտպան և ան-պատրաստ վիճակին ի տես, Ս. Գաբրիելյանն այլևս չէր փայփայում Հայաստանի անկախության կամ ինքնիշխանության երազները: «Հայքը» հոդվածներ է նվիրում Ռուսաստանի քաղաքակրթիչ, ինչպես և Արևելյան հարցի լուծման մեջ նրա գերակշիռ դերին՝ մասնավորապես ընդգծելով ռուսների կողմից Արևմտյան Հայաստանը գրավելու դրական կողմերը հայ ժողովրդի գոյապահպանության, համախմբման, լեզվի, ազգային մշակույթի, դիմագծի պահպանման տեսակետից: Զուլման վտանգը իրական չէր համարում, բացի այդ, լավատեսորեն հավատում էր, որ այդ հսկա կայսրության ազգային միավորումները հետագայում ինքնօրեն նահանգներ պետք է դառնան, և Հայաստանն էլ՝ դրանց թվում, «բայց քաղաքական և միջազգային տեսակէտով բոլորովին և սրտագին միացած լինելով Ռուսիոյ»[31]:

Ս. Գաբրիելյանն ավելի է առաջ գնում իր քաղաքական կանխատեսումների մեջ: Առաջին համաշխարհային պատերազմից դեռևս 17 տարի առաջ, կարծես

[30] Նույն տեղում, 1897, N 4, էջ 59:

[31] Նույն տեղում, N 23, էջ 234:

կանխագուշակելով պատերազմի պարագայում հայ ժողովրդին սպասվող նոր աղետները, նա մարգարեանում է. «Սարսափելի բաներ պիտի պատահին, հայութիւնն իրոք կոտորուելով, սպառելու վտանգին մէջ պիտի իյնայ: Միայն մէկ բան կրնայ այդ վտանգէն փրկել զինքը, այն է՝ ռուսական գրաւում պատերազմի հրատարակութենէն անմիջապէս վերջը: Չխաբուինք ուրիշ խօսքով, մեր ժողովուրդը զէնք չունի և ինքնապաշտպանութեան անզօր է բոլորովին»[32]:

Հետաքրքրական է «Հայքի» վերաբերմունքը քաղաքական ցույցերի նկատմամբ: Այս հարցին հանդեսի առաջին տարվա մոտեցումները զգալիորեն տարբերվում են վերջին տարիների տեսակետից: Սկզբնական «Հայքը», հեռու լինելով ցույցը դատապարտելուց, քանի որ այն, ըստ նրա, ազգի արթնացման նշան էր, պարզապես հավանություն չի տալիս պայքարի նման ձևին: Վերլուծելով 1890 թ. հուլիսի 15-ի Գում-Գափուի ցույցի քաղաքական նշանակությունը և պատմական դասերը՝ նա էլ չէր գերագնահատում այն, այլ սառը և սթափ դատողությամբ նշելով դրա չարաղետ հետևանքները, գրում էր, որ թուրքական կառավարության շահերից է բխում «գրգռել զՀայս ի տկար ապստամբական խլրտմունս և ջախջախել ու հոգնեցունել զնոսա»[33]: Բաբը Ալիի և Օտոմանյան բանկի ցույցերից և դրանց հաջորդած ջարդերից հետո ավելի է որոշակիանում Ս. Գաբրիելյանի դիրքորոշումը: Այսպես, եթե 1895 թ. Բաբը Ալիի ցույցի առիթով «Նյու Յորք թայմս» թերթում տպագրած իր բացատրության մեջ նա գրում է. «...Պոլսոյ այդ հայկական ցոյցն բովանդակ Հայ ցեղին ամենատխուր յուսավրիպութեան արտայայտութիւնն էր»[34], ապա 1896 թ. «Ի՞նչ կը խորհիք Պանքայի ցոյցին վրայ» հոդվածում արդեն ոչ միայն չի պաշտպանում այդ տեսակետը, այլև խստորեն դատապարտում է դաշնակցականներին՝ նման մեթոդներով, որ անպայմանորեն նոր կոտորածի առիթ էին ստեղծում, Եվրոպայի ուշադրությունը գրավելու միամիտ հույսերի համար, «...զի չար միջոցներով բարի նպատակի ծառայելու սկզբուն-քը՝ կոտորած պատճառելով բարեկարգութեան հասնելու մեթոտը՝ յաւիտեանս յաւիտենից սխալ է»[35]:

Այս հոդվածում պարզորոշ բացահայտվում են Ս. Գաբրիելյանի քաղաքական սկզբունքները և մարտավարությունը. «Մեր քաղաքականութիւնը պէտք է լինէր «հանդարտ կենալ», ցոյցէ զգուշանալ, զօրութիւն պատրաստել ապագային համար, կերակրել մեր անօթիները, նոր կոտորածոց վտանգը ամենայն խոհեմութեամբ հեռացնել, որքան հնար է և սպասել, որ ժամանակը մեզի օգնութեան ժմնէր...»[36]:

Մասնավոր ուշադրության են արժանի Ս. Գաբրիելյանի խորհրդածությունները հեղափոխության, հեղափոխական իրադրության, հատկապես հայկական

[32] Նույն տեղում, N 5, էջ 73-74:
[33] Նույն տեղում, 1893, N 13, էջ 357:
[34] Նույն տեղում, 1895, N 18, էջ 253:
[35] Նույն տեղում, 1896, N 10, էջ 147-148:
[36] Նույն տեղում, էջ 147:

հեղափոխության և «ճշմարիտ» հեղափոխականների մասին: «Հայկական յեղափոխութիւնք» հոդվածաշարում հեղինակը, ելնելով «Յառաջդիմութիւնն օրէնք է, պայքարն ալ անոր պայմանն» սկզբունքից, հեղափոխությունը համարում է ապագայի պայքարը անցյալի դեմ, առաջադիմության պայքարը՝ «աւանդութեան դեմ», «ներքին յառաջդիմութեան» և «արտաքին վիճակի» աններդաշնակության վերացում: Հանդեսը վերլուծում է Արևմտյան Հայաստանում ստեղծված սոցիալ-քաղաքական իրավիճակը և ապացուցում, որ այնտեղ ստեղծվել է հեղափոխական իրադրություն: «Հարկ է Հայկական գաւառաց վարչութիւնն համաձայնեցուցնել Հայոց յառաջադէմ գաղափարներուն և մշակեալ զգացմանց,- գրում է «Հայքը»,- և ահա այդ հարկն է, որ մտածել կուտայ, թէ յեղափոխութիւն մի տեղի պիտի ունենայ»[37]: Եվ չնայած որ հեղափոխությունը «պիտի գա ինքնին, դէպքերու տրամաբանական ընթացքին հետևութեամբ»[38], լինի տարերային և համաժողովրդական, խմբագիրն այն ընդունում է որպես վերջին, ծայրահեղ միջոց՝ չկորցնելով խաղաղ ճանապարհով ինքնօրինություն ստանալու հույսը:

Ս. Գաբրիելյանը երբեք չէր դնում օսմանյան բռնապետության տապալման հարցը, քանզի կարծում էր, թե այն ձեռնտու չէ Հայաստանի ազատագրության համար: «Բարեկամ, մտածեցէ՛ք,- գրում է նա,- եթէ այսօր Թուրքիա կործանի, այդ չպիտի նշանակէ Հայաստանի վերականգնում, պիտի նշանակէ աւելի քաղաքակիրթ և աւելի հզօր տէրութեան մի ենթարկուիլ»[39]: Ահա իրատեսական մի դիտողություն, որը բխում էր հայ ժողովրդի հնարավորությունների և միջազգային իրադրության սթափ գնահատումից:

«Հայքի» խմբագրի քաղաքական հայացքները շատ ավելի բացահայտ և որոշակի են բանավիճային այն հոդվածներում, որոնք վերաբերում են Հնչակյան կուսակցության ծրագրին ու գործունեությանը: «Հայքի» ազատագրական պայքարի հայեցակետը էական տարբերություններ է դրսևորում թե՛ ազատագրական պայքարի ձևերի ու միջոցների, թե՛ վերջնական նպատակի հարցում: Նշենք, որ «Հայքի» խմբագրի քաղաքական դավանանքում ազգի շահերը և ազգայինը գերադաս էին ընկերվարական ամեն տեսակի ուսմունքներից, և հենց այս դիրքերից էլ քննադատվում էր Հնչակյան կուսակցությունը: Խմբագիրն իր նկատառումներն էր հայտնում սոցիալիզմի, հասարակական սեփականության, դասակարգերի ոչնչացման, ժողովրդական պետության մասին: «Հայքը» հեռու էր սոցիալիստական հայացքների համար հնչակյաններին դատապարտելուց, սակայն հանդիմանում էր նրանց՝ հայ ժողովրդի իրական վիճակին չհարմարվելու պատճառով: «Երբ Հայաստանի համար դրութիւն մի կ'երկնեմք ի մտի,- գրում էր հանդեսը,- հարկ անհրաժեշտ է, որ չափերն ու պայմաններն առնումք Հայաստանէն, ոչ թէ մեր

[37] Նույն տեղում. 1892, N 8, էջ 59:
[38] Նույն տեղում, N 9, էջ 66:
[39] Նույն տեղում, 1894, N 7, էջ 9:

ուսմունքէն ու բաղձանքէն»[40]: Գնահատում էր ծրագրի մոտակա նպատակը՝ ազգային անկախության հասնելու ձգտումը և կուսակցության գործունեությունն այդ ուղղությամբ, սակայն սխալ էր համարում ազատագրական պայքարի միջոցների և ձևերի ընտրության գործում դիվանագիտության և օտար պետությունների աջակցության հնարավորության անտեսումը: Հանդեսն առաջարկում էր միանալ դիվանագիտական գործիչներին, «որպէս զի սուր և գրիչ միանգամայն և ներդաշնակ կերպիւ գործածուին ի լուծումն Հայկական խնդրոյն»[41]:

Հնչակյան կուսակցության ծրագրի քննադատությունն աննկատ չի մնում, և շուտով ստացվում է կուսակցության ներկայացուցիչ, տնտեսագետ Նշան Կարապետյանի (Ռ. Խան-Ազատ) պատասխանը Աթենքից, որով էլ սկսվում է բանավեճը: Թեև այն սուր բնույթ չի ստանում, քանի որ խմբագիրն ինքն էլ դեմ էր պարբերականի էջերն անպտուղ բանավեճի ծառայեցնելուն, այնուամենայնիվ, օգնում է ամբողջությամբ բացահայտելու Ս. Գաբրիելյանի հայացքները հատկապես այդ հարցի վերաբերյալ: Հենց նույն համարում տպագրվում է նրա պատասխանը «Ընկերվարականութիւնը և Հայկական խնդիրն» խորագրով, որտեղ ավելի հանգամանորեն են քննարկվում ծրագրի սոցիալական որոշ դրույթներ՝ տնտեսական հավասարություն, հողի, մասնավոր սեփականության հանրայնացում, հայ իրականության մեջ սոցիալիզմի կիրառման հնարավորություն և այլն: Համեմատելով այլ երկրների հետ՝ Ս. Գաբրիելյանն ապացուցում է, որ Հայաստանում տնտեսական և քաղաքական նախադրյալներ չկան սոցիալիզմի տարածման համար, և հայ ժողովուրդն անկարող է այն հասկանալու: Նա դիտել է տալիս, թե «պէտք է այժմ խօսիլ Հայոց անմիջական պիտոյից և ներկայ վիճակի մասին, այն է՝ քաղաքական և վարչական բարեփոխութեանց մասին, վասն զի մինչև որ կառավարական բարեփոխութիւն չլինի, անհնար է, թէ ընկերական բարւոքումներ իրագործուին»[42]:

1892 թ. N 1-ում «Հայքը» տպագրում է Աթենքից ստացված մեկ նամակ ևս՝ Գ. Գալֆայանի «Սօսիալիզմը հայ ժողովուրդի մէջ» վերնագրով, որն առիթ է դառնում N 2-ում «Թէ ինչպիսի՞ ինքնօրութիւն պէտք է Օսմանեան Հայաստանի: Հնչակեան պահանջմանց անտեղիութիւնն» խորագրով ընդարձակ հոդվածի հրատարակման, որտեղ Ս. Գաբրիելյանն ավելի հանգամանալից է անդրադառնում արդեն իսկ արծարծված հարցերին՝ այս անգամ արդեն Հայաստանում հաստատվելիք պետական վարչաձևի առնչությամբ: Մերժելով Հնչակյան կուսակցության ծրագրի այն դրույթները ևս, որոնք վերաբերում են ապագա ազատ Հայաստանի պետական կարգին, նա այն համարում է ծրագրի «քան զամենայն տկար կէտն»: Հիմնական փաստարկներից մեկն այս է. «…բաւական չէ, որ կառավարական դրութիւն մի

---

[40] *Նույն տեղում, 1891, N 18, էջ 138:*

[41] *Նույն տեղում:*

[42] *Նույն տեղում, N 22, էջ 173:*

ինքնին լաւ լինի, պէտք է, որ այն յարմարի կառավարելի ժողովրդեան»[43]: Հեղինակը կարծում է, որ հայ ժողովուրդն իր զարգացման, կրթության, քաղաքակրթության մակարդակով կարիք ունի կառավարվելու և ոչ թե կառավարելու: Իշխանության ղեկը ռամիկներին հանձնելը կնշանակեր նրանց անիշխանության մատնել: Հայը պետք է ունենա վարչություն իր ազգային, կրոնական և տնտեսական պահանջմունքներին համապատասխան: «Հայաստան կարօտ է հայ իշխանի մի,- պնդում է Ս. Գաբրիելյանը,- որ ունենայ գլուխ և սիրտ մշակեալ և կառավարելու ձիրք, զօրաւոր, անկաշառելի, արդարակորով բնաւորութիւն: Այդ իշխանի քով պիտի լինի երեսփոխանական ժողով մի, ազգային խորհրդարան մի առաւել կամ նուազ հանգոյն պուլկարականին, հունականին, և հայ իշխանապետութիւնն հարկատու պիտի լինի սուլթանին»[44]:

Հենց այս գլխավոր նպատակի՝ «ինքնօրէն» և «քրիստոնեայ» Հայաստանի պահանջն է, որ Ս. Գաբրիելյանին մղում է ազատագրական պայքարի ձևերի ու միջոցների ընտրության հարցում հակադրվելու ժամանակի կուսակցությունների տեսակետին: Նպատակին հասնելու ճանապարհին խանգարիչ հանգամանք էր սոցիալիստական գաղափարախոսությունը: Առարկությունը հիմնականում վերաբերում է սոցիալիզմը գործունեության հիմքում դնելու վաղաժամությանը և կուսակցության անդամակցությունը պայման դարձնելուն: Եթե երկրորդ կետն արգելում է կուսակցության մեջ մտնել բոլոր անկեղծ հայրենասերներին, որոնք չեն ընդունում սոցիալիզմը, ապա առաջինը կուսակցությանը, նաև ժողովրդին զրկում է թե՛ նյութական, թե՛ քաղաքական, դիվանագիտական օգնությունից: Այս տեսակետից Ս. Գաբրիելյանը շատ վտանգավոր և անխոհեմ քայլ է համարում Հայաստանը «սօսիալիսթներու գործունէութեան ասպարէզ և բոյն երևցունել»-ը[45]: Առարկություններից մեկն էլ սոցիալ-դեմոկրատների գործունեության ասպարեզի շատ լայն ընդգրկումն էր. նրանք խնդիր էին դնում բարեկարգել Թուրքիան մի ծայրից մյուսը, որի ո՛չ կոչումը և ո՛չ էլ ուժն ունեին, որով և վտանգում էին Հայ դատը և այն անվանարկում Եվրոպայի աչքին:

Սակայն այս հիմնավոր քննադատություններն ամենևին էլ չէին խանգարում, որ Ս. Գաբրիելյանը գնահատի ազատագրության գործին հնչակյանների բերած նպաստը և նվիրումը: Նրանց ներկայացնելով որպես կազմակերպելու ունակ անկեղծ, խիզախ, հայրենասեր, ժողովրդասեր գործիչներ, հիանալով նրանց գործունեությամբ և անխոնջ եռանդով՝ հանդեսը նաև քննադատում էր հնչակյաններին՝ առանց լավ նախապատրաստվելու հախուռն գործելու համար. «Չգործել յանցանք է, յախուռն գործել աւելի մեծ յանցանք է: Հայաստանի ժողովրդական մեծ զանգուածին հետ խաղալ՝ հայ ցեղին մահու կամ կենաց վճիռն պատրաստել է...»[46]:

---

[43] Նույն տեղում, 1892, N 2, էջ 12:

[44] Նույն տեղում:

[45] Նույն տեղում, 1893, N 18, էջ 284:

[46] Նույն տեղում, 1892, N 19, էջ 146:

Հակառակորդ կողմից սխալ չընկալվելու նկատառումներով՝ 1894 թ. բանավեճը դադարեցվում է: 1896 թ. հանդեսը գրում էր, թե «անիրաւութիւն կը լինէր քննադատութեամբք այն տպաւորու- թիւնն յառաջ բերել, իբր թէ հայկական վերջին արհաւիրք լոկ հընչակեանց կամ մանաւանդ Հնչակի մոլոր ընթացքին պտուղն էին»[47]: Սակայն ընդամենը մեկ տարի անց, Արևմտյան Հայաստանում ստեղծված իրադրության ի տես, նրա մեղադրանքները խիստ և կտրուկ են դառնում: «Պէտք չէ, որ բարեկարգութիւններու ետևէն վազենք այնպիսի մեթոտով, որ ազգին բոլորական ջնջումն տեսնենք: Օսմ. պետութիւնը կործանել կրնանք այդ կերպով, բայց մենք ալ հետը կը կործանինք»[48],- գրում էր հանդեսը: 1894-1896 թթ. կոտորածներից հետո «Հայքը» խորհուրդ էր տալիս. «…մեզ կը մնայ զգուշաւոր քաղաքականութեան հետևիլ և մեր ջանքերը առ այժմ ուղղել դիւանագիտական միջոցներու»[49]:

Մեծագույն սխալ համարելով Հայաստանի ազատագրությունը և ազգի փրկությունը որևէ կուսակցության, առավել ևս մի քանի, թեկուզև ամենատաղանդավոր անհատների վստահելը՝ խմբագ- իրն իր համոզումների հաստատումն էր գտնում հայկական ջարդե-րի օրինակով: «Հայքը» ներկայացնում էր հայ ազգային-ազատագրական շարժման անվանի գործիչներին (Մինաս Չերազ, Միհրան Սվազյան, Կարապետ Հակոբյան և ուրիշներ) և նրանց տեսակետները Հայկական հարցի լուծման ուղիների վերաբերյալ: Մեծ դրվատանքի են արժանանում Մ. Չերազի ազգանվեր գործունեությունը և նրա խմբագրած պարբերականը՝ այնքանով, որքանով Ս. Գաբրիելյանի ազատագրական պայքարի տեսության մեջ կարևորագույն տեղ էր վերապահվում հայ ազգը և Հայ դատը Եվրոպային ներկա-յացնելու հարցին: Չերազի նկատմամբ իր ողջ համակրանքով հանդերձ՝ Ս. Գաբրիելյանը քննադատելի է համարում նրա գործունեության որոշ կողմեր՝ խաղաղ միջոցներին առավելություն տալը, չափազանց պահպանողականությունը և այլն: Իսկ Չերազի և սոցիալ-դեմոկրատների հայացքներն ու գործելակերպը համեմատելով՝ նրրանց դնում է հակառակ ծայրաբևեռներում՝ երկուսն էլ, ըստ Գաբրիելյանի, խիստ վնասակար:

Չենք կարող չնշել նաև Ս. Գաբրիելյանի գաղափարական առընչությունները թե՛ «Արմենիայի» և արմենականության, թե՛, մա- նավանդ հրատարակության վերջին տարիներին, վերակազմյալ հընչակյանների գաղափարախոսության հետ, որոնք ակնառու էին Արևմտյան Հայաստանի ազատագրության ուղիների, հայ ազգային-ազատագրական պայքարի ձևերի ու միջոցների, նաև վերջնական նպատակի վերաբերյալ հանդեսում շարադրված տեսակետներում: Գաղափարական նման ներթափանցումները հայ հասարակական-քաղաքական մտքի ձևավորման այն տարիներին, երբ դեռ խստորեն սահմանազատված չէին հայ ազգային

[47] Նույն տեղում, 1896, N 4, էջ 50:
[48] Նույն տեղում, N 10, էջ 145:
[49] Նույն տեղում, 1897, N 18, էջ 193:

գաղափարախոսության տարբեր ուղղությունները, օրինաչափ էին ոչ միայն առանձին անհատների, այլև կազմակերպությունների համար: Ս. Գաբրիելյանի քաղաքական հավատամքը էական փոփոխություն չկրեց հետագա տարիներին ևս: Նա ոչ մի կուսակցության չպատկանեց: Թեև նրա չափավոր պահպանողական և չափավոր ազատամիտ գաղափարները երկկողմանի քննադատության ենթարկվեցին ժամանակակիցների և ուսումնասիրողների կողմից, սակայն իրենց ամբողջության մեջ անկողմնակալ ու արժանի գնահատականի չարժանացան երբևէ: Ակնհայտ է, որ Ս. Գաբրիելյանը ժամանակի հայ ժողովրդի մի ստվար (թերևս չկուսակցականացված) մասի հայացքները կրողն ու արտահայտողն էր:

ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ
ВЗГЛЯДЫ СМБАТА ГАБРИЕЛЯНА И ЖУРНАЛ «АЙК»

СТЕПАНЯН Э. Т.

Резюме

Общественно-политические взгляды Смбата Габриеляна, видного армянского мыслителя и общественного деятеля США конца XIX и начала XX веков, нашли отражение на страницах журнала “Айк”, издававшегося в Нью-Йорке в 1891-1898 гг. Журнал обращался к вопросам истории армянского народа, в частности к проблеме освобождения Западной Армении путем создания общеармянской организации в армянских зарубежных колониях. Основатель и редактор журнала Смбат Габриелян апеллировал как к идее вооруженной борьбы, так и к средствам дипломатии. При этом он придавал особое значение психологическому фактору в национальном самосознании.